ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ- 2016 թ.

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ (ԳԿՄԿ)

2016 թ. առանցքային կարելի է համարել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման առումով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն դիմեց ինստիտուցիոնալ հավատարմագրման:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից կազմակերպվեց և անցկացվեց ողջ հավատարմագրման գործընթացը, մասնավորապես.

-ՀՀ Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ ճշգրտվեց և հաստատվեց հավատարմագրման գործընթացի մանրամասները, մշակվեց գործողությունների ժամանակացույց,

-ս/թ մայիս ամսին կազմակերպվեց փորձագիտական խմբի աշխատանքները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում,

-կազմակերպվեց փորձագիտական խմբի այց ՀՀ ԳԱԱ համակարգի գիտահետազոտական հաստատություններ,

-կազմակերպվեց հանդիպումների շարք փորձագիտական խմբի կողմից առաջադրված թիրախ խմբերի հետ,

Այնուհետև փորձագիտական խմբի վերջնական զեկույցը ստանալուց հետո ՈԱ բաժնի կողմից կազմակերպվեց դրա քննարկումը տնօրինության, ԳԽ-ի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ, կատարվեց աշխատանքների գնահատում, պատրաստվեց զեկույցի պատասխանը,

անցկացվեցին հանդիպում-քննարկումներ ՈԱԱԿ-ում՝ փորձագիտական խմբի և ԳԿՄԿ ներկայացուցիչների հետ:
Զեկույցի վերջնական տարբերակը ստանալուց հետո ՈԱ բաժնի կողմից կազմակերպվեց զեկույցում առկա թերությունների շտկման ուղղությամբ բարեփոխումների պլանի կազմման, մշակման աշխատանքները, որում ներգրավվեցին ԳԿՄԿ բոլոր ստորաբաժանումները: Բարեփոխումների պլան-ժամանակացույցը ՈԱԱԿ ներկայացվեց 2016 թ. դեկտեմբերին:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել են նաև հետևյալ գործառույթները.

- Անց է կացվել 2014-2016 թթ. առկա ուսուցման շրջանավարտների՝ կրթական ծրագրերից գոհունակության հարցումներ 12 մասնագիտությունների շրջանակներում, շուրջ 187 շրջանավարտների շրջանում:
- Իրականացվել է 2014-2016 թթ. առկա ուսուցման շրջանավարտների՝ կրթական ծրագրերից գոհունակության հարցումների վերլուծություն:
- Անց է կացվել դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումներ (2015-2016, 2016-2017 ուստարիներ), որը ներառում է 3 կիսամյակ: Հարցումներն անց են կացվել 37 խմբերում, որից 19-ը՝ առկա, 18-ը՝ հեռակա:
- Իրականացվել է դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների վերլուծություն (2015-2016 ուստարի), վերլուծության արդյունքները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացվել են համապատասխան ամբիոնների վարիչներին, հրավիրվել են ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ինչպես արդյունքները, այնպես էլ մագիստրոսների բարձրաձայնած հարցերն ու առաջարկները:

- Կազմակերպվել են հանդիպումներ ինչպես ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոններում՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, այնպես էլ վարչական ստորաբաժանումների ղեկավարների հետ, որտեղ ներկայացվել են կրթության որակի ներբուհական համակարգի ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքները, ՈԱԱԿ սահմանած չափանիշներն ու չափորոշիչները, այս ուղղությամբ առաջիկա անելիքները, ներկայացվել են նաև հարցումների արդյունքները:
- ԳԿՄԿ գործունեության առանցքային ասպարեզներում առաջարկվել է ներդնել ՊԻԳԲ սկզբունքը, ներկայացվել է դրա առավելությունները:
- Կազմակերպվել են քննարկումներ կրթական ծրագրերի բարեփոխումների, վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մշակման խնդիրների վերաբերյալ:
- Համաձայն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ նպատակ 2-ի աշխատանքներ են տարվում կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի կատարելագործման մեխանիզմների ստեղծման և ներդրման, ներքին վերահսկման համակարգի ներդրման, մշտադիտարկման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:
- Համաձայն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ նպատակ 6-ի՝ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ուսանողական խորհրդի անդամների հետ, քննարկվել են ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացման, իրենց իրավունքների ու պարտականություններին վերաբերող հարցեր:
- Օտար լեզուների ամբիոնի հետ մշակվել է ժամանակացույց-պլան ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի լեզվական գիտելիքների կարիքի գնահատման, խմբավորման և վերապատրաստումների անցկացման վերաբերյալ:
- Ձեռք բերված արդյունքների տարածման կազմակերպում: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքում ակտիվացվել է ինչպես կրթության որակի ապահովման ուղղությամբ

տարվող աշխատանքների վերաբերյալ նորությունների բլոկը, այնպես էլ ՈԱ բաժնին հատկացված մասնահատվածը, որտեղ ներբեռնվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի ապահովման հայեցակարգը, սկզբունքները, քաղաքականությունը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ բաժնի կանոնադրությունը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ ձեռնարկը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի

ապահովման բաժնի պետ՝ բ.գ.թ. Ն. Վարդանյան

31.01.2017 թ.